ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի ուղերձը շինարարների օրվա առթիվ

11.08.2019

Հարգարժան շինարարներ

Մեր հայրենիքը բարձրացել ու շենացել է միմիայն կառուցող ու հմուտ ձեռքերի, ջանասիրության ու նվիրումի շնորհիվ: Դուք եք արժանի շարունակողները այն ձեռնարկների, որ մեզ ավանդել են մեր ճարտարապետները, վարպետները, շինարարները՝ իրար միավորելով անցյալի փորձն ու շինարարական նորագույն մտահղացումները: Շինարարի տոնն այժմ առավել է արժեւորվում, երբ մեր մարզի գրեթե յուրաքանչյուր անկյունում, ձեր իսկ անմիջական մասնակցությամբ, շինարարական եռուզեռ է ընթանում ճանապարհների, ջրատարների, կրթական ու մշակութային հաստատությունների կառուցման կամ նորոգման, կենսական նշանակության այլ ծրագրերի իրականացման ուղղություններում: Համոզված եմ, որ ձեր այսօրվա կառուցածն անխափան ծառայելու է դարերի ու սերունդների համար:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ, մաղթում նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ Նոր Հայաստանի կառուցման պատվաբեր գործում:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյան